

Հաշվետվություն

ԱՆ Վերահսկողական վարչության վեցերորդ բաժնի փորձագետ Մանե Հովակիմյանի կողմից 2022թ. մայիսի 11-ից մինչև 2022 թվականի հուլիսի 11-ը կատարված աշխատանքի վերաբերյալ

Ես՝ Մանե Հովակիմյանս, 2022 թվականի մայիսի 11-ից մինչև հուլիսի 11-ը, որպես փորձագետ, իրականացրել եմ հետևյալ գործառույթները. Տրամադրել եմ տեղեկատվություն ՀՀ քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց և իրավաբանական անձանց:

Տրամադրել եմ տեղեկատվություն և իրականացրել եմ խորհրդատվություն ՀԿԱԾ, քրեակատարողական ծառայության, պրոբացիայի, սնանկության, հաշտարարության, նոտարական գործունեության, ՔԿԱԳ, ռեգիստրի, անձնական տվյալների պաշտպանության, իրավական փորձաքննության, միջազգային իրավական փոխօգնության, հակակոռուպցիոն և պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակների և ԱՆ-ի կողմից օրենքով սահմանված այլ գործունեության ոլորտների վերաբերյալ:

Պատասխանել եմ քաղաքացիների հեռախոսազանգերին՝ կապված ՔԿԱԳ գործունեության, օրենսդրական փոփոխությունների, նախարարի ընդունելության, դատապարտյալների փոխանցման, քաղաքացիների դիմումների ընթացքի, օտարերկրյա հարցումների, ապոստիլի, ռեգիստրի, արխիվի և այլնի հետ: Քաղաքացիներին տրամադրել եմ խորհրդատվություն՝ դիմումներ ներկայացնելու վերաբերյալ:

Մանե Հովակիմյան

11.07.2022թ.